




ԵՐՐՈՐԴ ՏԱՐԻ

ԹԻԻ 112

13 ՍԵՊՏԵՄԲԵՐ 1913

ԿՐՈՆԱԿԱՆ ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՃԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ

ՇԱՐԱԹԱԹԵՐԹ

ՀԱՅ ԿԱԹՈՂԻԿԷ ՊԱՏՐԻԱՐԺԱՐԱՆԻ



ԿԱԹՈՂՈՍԷ ԱՐՁԱԳԱՆԳ

ԿՐՕՆԱԿԱՆ, ԳԻՏԱԿԱՆ ԵՒ ՏԵՂԵԿԱԳՐԱԿԱՆ
ՀԱՄԱՐԱԹԱԹԱԹԵՐԹ

Երրորդ տարի 13 Սեպտեմբեր 1913 Թիւ 112

«Մերական Բանաստեղծական Պիոս Ժ. կը մտադրէ որ Կարողիկէ Արձագանգ շաբաթաբերքը շաբաթականի Հայաստանի կարողիկէ ժողովրդոց մէջ, մանաւանդ ի գաւառս, փրկարար առաքելութիւն մը կատարել, ի բուրգաւանանս կրօնից եւ ի հոգեւոր օգուտ հոգիներու: Այս մտաբանաց արդիւնաւորութեան համար Մերական Հայրն արտագին կ'օրհնէ յիշեալ Շաբաթաբերքը, ինչպէս նաեւ ամբողջ խմբագիրներն եւ ընթերցողները»:

Նամակ Կարգ. Մէրի Տէլ Վալի, առ Ամեն. Տ. Պօղոս Պետրոս Ժ. Թեոփան, Հայ Կարողիկէ Պատրիարք Վիլիկիո 23 Նոյեմբերի 1912, ընդ 60780 քու անամարտ:

ԴԵՊՐԵՐ ԵՒ ՍԿԶՐՈՒՆՔՆԵՐ

ՕՐԲԱՆԵԱՆԻ ԱՋԴԱՊԱՏՈՒՄԸ

Նախապէս առիթ ունեցանք անցողակի դատաստան մը ընել Օրմանեանի Ազգապատան անուանած եւ պրակ առ պրակ հրատարակած գործին վրայ՝ որ ազգային՝ մանաւանդ եկեղեցական պատմութիւնը ժողովրդականացնելու նպատակ ունի: Մենք պատմական կէտի մը, — Ս. Գրիգոր Լուսաւորչի ի Հոռոմ ուղեւորութեան, — վրայ միայն սեւեռելով մեր խուզարկիչ ախարկը, ի վեր հանեցինք իր կեղծաւորութիւնը, եւ մանաւանդ այն թեթեւութիւնը, որով կը խաղայ պատմական դէպքերու հետ. կը ջնջէ ու կը ստեղծէ՝ ինքնօրէն աղիկամբ. կը լռէ կամ

կը խաթարէ. կարեւոր եւ ծանրակշիռ վիճարկումները գրեթէ կը ծաղրաբանէ, բոլորովին անկարեւորը իբր ամենավճռական կը ցուցադրէ. սրբութիւնները, աւանդութիւնները, վաւերականութիւնները բոլոր կ'ուրանայ՝ զրչի անխիղճ հարուածներով. եւ այսպէս կը խաթէ տգէտները: Իսկ գիտնոց հանդէպ... անոնց համար ալ զէնք մը հնարած է, փուռ ու ժանդոտ զէնք մը: Ինքք բնական պատմութիւն չի գրեր եղեր! Ինչո՞ւ ուրեմն այսքան ստուար հատորներ. ինչո՞ւ, մանաւանդ, իր չսիրած պատմական մէկ դէպքը իբր թէ ջրելու համար, — կ'ըսենք՝ իբր քե, քանզի դէպք մը ջրել կարելի չէ, սոսկ ինքնախարութիւն է, — ազդէն անդին պատճառներ կը բերէ. կը դիպէ. նոր աղանդաւորներուն, բանապաշտներուն, արդիականներուն մտամէջ սովորութիւնները կը շարէ՝ իրրեւ թէ իր զիւտերն ըլլային. եթէ

ԲՆՆԱԿԱՆ ՀԷ ԻՐ ԳՈՐԾԸ, ԽՆԶՆԸ ՈՒԶԱՅ ՏԵ-
ՂԵՐԸ ԿԸ ՎԱՏԱԾԱՌԱՐԱՆԷ... ՄԻՋԻՆ ԹԷ ԱՌ
ՀԱՍԱՐԱԿ ԿԸ ԽՈՒՍԱՐԻՆ՝ մշջերունիներ ընելէ.
որովհետեւ եթէ այդ ոճը ընդգրկէր, պէտք
պիտի ըլլար զայն գործածել ամենուրեք. և
այս կ'ենթադրէր առաքինութիւն մը, — ան-
կեղծութիւն, — որմէ փորձախնայութիւն հետեւ է
Օրմանեան: Ինքը սեւեռեալ գաղափար մը
ունի. մշտաւանջ մը, որ գիշեր ցորիկ կը հե-
տապնդէ, կը չարչարէ զինքը... Իր խիղճը.
այդ խիղճը, ո՛րքան ալ քարացած, կը խօսի
սակայն: Սրդ ինքը կ'ուզէ զայն լսեցնել.
կ'ուզէ համոզուիլ և համոզել թէ՛ փրկու-
թիւնը անպատճառ Հռոմայ եկեղեցիին մէջ
չէ. թէ՛ Եջմիածնական եկեղեցիին ալ Բրիս-
տոսի է, թէ՛ անկախ (և հետեւաբար հեր-
ձուածող և հերետիկոս). թէ՛ այդ իր կիր-
պաւորած եկեղեցին աւիսաբնական է. ևն.,
ևն.: Չորս ջանք, տարապարտ վատաւի:
Միտրեալ եւ մոլորեցուցանէ: Եւ ի՞նչ հա-
ճոյք կայ արդեօք խիղճը մեղսելով մարդ-
կան հաճոյ ըլլալու մէջ, մանաւանդ այդ
տարիքէն վերջը, երբ մարդ ահիւ և գողու-
թեամբ պէտք է մտածէ մօտալուտ անաչառ
դատաւորանին վրայ:

Ինչ որ է, իր և իր նմաններուն վրայ
Առաւելոյ առատ և անսխալ զթուրթիւնը հայ-
ցելով, իր ըրած չարքիքին գոնէ փոքու ի-
ւրք զարման մը տանելու: Նպատակաւ՝ մերթ
ընդ մերթ, երբ ստիպէր ներկայանայ, կ'ու-
զէր քի վեր հանել իր կեղծուպատիր նկա-
րագիրը և ձաղկել ստուրթիւնները և ժպը-
հութիւնը: Այս անգամ ստիպէր ընծայեց մեղ
Բաղնավկայի մէջ (1913 թիւ 1, էջ 332)
Վենետիկյ Մխիթ. Վեր. Հ. Յ. Աւգերի մէկ
գրաքննականը որ Օրմանեանի յիշեալ երկը
կը գատէ, թէ՛ և ըստ մասին: Մենք փա-
փաքեցանք իր լուրջ շեշտութիւնները ներ-
կայացնել մեր ընթերցողներուն, ուրիշ վըր-
ձնուէ մըն ալ Օրմանեանի — գոնէ կիսովի
(de profil) — գծուած՝ կեղծ ու աճաբարի
գէժքը ցոլացնելու մտք:

Վեր. Հ. Աւգերի կ'ըսէ.

«Նախորդ ազնամներ ստիպ ունեցանք
յիշատակելու Մաղ. Արք. Օրմանեանի Ազ-

գապատումը, որուն առաջին մասն ամբողջ
աւարտած ունինք դիմացնիս և կրնանք գոր-
ծին էութեան և ուղղութեան վրայ մեր աւ-
սութիւնը կազմել: Հրատարակուած Թ. 10
պրակները 1600 էջով կը հասցնեն Հայկական
Եկեղեցւոյ պատմութիւնը մինչև շուրջ 1900:
Անկողմնակալ առարկայական քննութեամբ
գիտելով այս ընդարձակածաւալ հրատարա-
կութիւնը և զերծ բոլորովին կանխտակաւ
գաղափարներէ՝ չենք դանդաղիր յայտնելու
որ ընդհանրապէս պատմական ամփոփում
մըն է ազգային ոչ միայն եկեղեցական, այլ
նաեւ քաղաքական և մատենագրական անց-
քերու և անձերու: Սակայն կը փութանք
միանգամայն յայտնելու որ հեղինակը չափա-
զանց մղուած կը տեսնուի հաճելի ըլլալու
տենչէ մը, և ևայդ՝ ընդհանուր ժողովրդեան
մեծ խումբի մը հաճելի ըլլալու տենչէ...
Յիշաւի տեսնելով այս գործը ներկայ ձեւին
մէջ կը փորձուի ամէն մարդ խելոյն խոստո-
ւանելու թէ հեղինակը փափաք մը ունեցած
է ժողովրդեան հաճոյ ըլլալու և նպատակ
դրած է (անշուշտ յատուկ և հեռանկատ դի-
տումով մը) իր երկասիրութեան խոշոր ծա-
ւալով շլացնել աչքերը: Այս պատճառաւ է
որ անուս եղած են հոն՝ յուզուած բանասի-
րակա՛ն զանազան ինտելիկներ պատմական մա-
տենագրական տեսակէտով, և ուր որ հե-
ղինակը շօշափել ուզած է այդ ինտելիկները,
ջանացած է միայն համաձայնիլ այն դատա-
կարդին գաղափարաց ու համոզմանց՝ որոնց
համար կը գրէ, արհամարելով յաճախ և եր-
բեմն բոլորովին իսկ անտեսելով բանասիրա-
կան հետազոտութեանց ստացած արդիւնքը:
Եթէ հեղինակը ուզէր մի քիչ իր ընթերցո-
ղաց մէջ գիտնական դասակարգ մըն ալ նը-
կատել, անշուշտ շատ տեղեր աւելի հաւա-
տարիմ պիտի գտնուէր իր իսկ բանասիրա-
կան համոզմանց. չատ փէտեր տարբեր և
բեւոյթի տակ պիտի ներկայացնէր. և ինչ
ինչ ինտելիկներու մօտէն բոլորովին հակառակը
պիտի գրէր. քան ինչ որ զրոյս է այժմ: Բա-
նասիր ընթերցողներու մէջ պիտի չ'ուզէր
քիչտ կայր կամ կանխակալ, նախապաշարուած
համակրներ տեսնել, որոնք առանց դժուա-

րութիւն մը զգալու հաւանէին իր ըսածնե-
րուն, կամ չյառնէին իրենց դէմ երբ ինքը
ճշմարտութեան դէմ կը յառնէ: Թողո՛ւնք
զանազան խնդիրներ ու կէտեր որոնց մասին
ծանր դիտողութիւններ ունինք ընկու. սա-
կայն համառօտ գրախօսականի սահմանէն
չենք ուզեր շեղիլ, եւ կը լռենք անոնց
մասին: Բայց չենք կարող հանգուրժել որ
Օրմանեան Սրբազանը, պարզ ժողովրդական
զասակարգի մը աչքը չլացնելու դիմամբ ոչ
թէ միայն ոսնակոխ ընէ ճշմարտութեան է-
ութիւնը. այլ նաեւ համարձակի գործածելու
լիզու մի և ոճ մը նկատմամբ մեր ամենէն
աւելի նուիրական և սուրբ Հայրապետներու,
որոնց սրբազան յիշատակին նախատինք և
հայհոյութիւն մըն են իր խօսքերը»:

Հոս Վեր. Հ. Աւգեր երկայն մէջբերում
մը կ'ընէ Օրմանեանի Ազգապատումէն (էջ
1371-1371), զոր մինք զանց կ'առնենք առ
համառօտութեան: Անոր մէջ Օրմանեան այլ-
եւայլ փճախօսութիւններով կը ճգնի Գրիգոր
Գ. Պահլաւունայ ի Հռոմ զրկած պատգամա-
ւորութեան նշանակութիւնը, որչափ հնար է,
նուազեցնել, Դրայզիկի Ոթոն արքեպիսկո-
սոսին, որ ներկայ էր, հեղինակութիւնը
անկարելի ցուցնելով և անմոտէն ծաղրա-
բանելով. մանաւանդ ծնունդի և Յայտնու-
թեան ի միասին տօնուելու, բաժակին մէջ
ջուր խառնելու, թիւ պատարագի, ևն. խըն-
դիրներուն շուրջ: Այս մէջբերումէն վերջը
Հ. Աւգեր կը շարունակէ այսպէս.

«Այս ընդարձակ հատուածը մէջ բերելնուս
նպատակն է ցուցնել թէ ինչպիսի՛ անվայել և
աղայական թեթեւութեամբ պատմուած են
զանազան դէպքեր, և դարձեալ որպէս զի
մեր ընթերցողք որոշ գաղափար մը կազմեն
ամբողջ գրքին հոգւայն և գրութեան ոճին
վրայ, որ ստուգիւ հեղինակին ոչ սնուան,
ոչ տարիքին և ոչ անտիճանին կրնայ պատ-
շածիլ: Եւ ի՞նչպէս կարելի է դիտումնաւոր
մատգրադութիւն կամ մտազոյթիւն չտես-
նել երբ այս ամէնը գրելէն վերջ կը յարէ,
թէ ազգային պատմութիւնը Հռոմ զրկուած
պատգամաւորութենէն ալ անդեկութիւն
չունի... սպարպիւն վերջացած և օգուտ

չունեցած գործ մըն է եղածը. եթէ պաշտօ-
նական եղելութիւնն իսկ՝ կասկածի ներքեւ
չթողունք ազգային աղբիւրներու լռութեան
վրայ հիմնուելով. և սակայն ինքը չէ՞ր որ
վերը յիշատակեց թէ Գրիգոր կաթողիկոսի
յղած պատգամաւորութեան վրայօք Սիս
գումարուած 1327ի ժողովը կը յիշէ և այլն:
Բաց աստի բացի խմբուն հացի խնդրէն մի-
թէ ճշմարիտ չէ՞ն Ոթոնի աւանդած միւս կէ-
տերը. մի՛ թէ Մուսնի և Յայտնութիւն միա-
սին չէին տօնուեր. մի՛ թէ անջուր բաժակով
չէ՞ր հայկական պատարագը, և մի՛ թէ այս
կէտերը չէին որ դարաւոր երկար վիճաբա-
նութեանց առթիւ տուին ամէն անգամ որ
Յոյն և Հայ, Հայ և Լատին եկեղեցեաց մի-
ութեան վրայ խօսք եղաւ: Եւ մի՛ թէ բնա-
կան չէ՞ր որ Քահանայապետն ուղղակի հան-
դիսաւոր պատարագի և ամենօրեայ թիւ
պատարագի մատուցմամբ ուզեր ցուցնել Հայ
պատգամաւորաց Լատին եկեղեցւոյ ծէսերը:
Լաւագոյն կ'ըլլար անշուշտ որ հեղինակը
քիչ մը աւելի զգուշաւոր գտնուէր գէթ
խոհմութեան և հեռաւորութեան համար,
յամենայնի և ամէնուն քով շողոքորթու-
թիւն և կեղծաւորութիւն տեսնելէ, որպէս
զի ընթերցողաց մտքին մէջ ալ չ'արթնայ
նոյն յատկութիւնները բուն իր գործին մէջ
նշմարելու գաղափարը: Օրմանեան Սրբազա-
նը կը տարուքերի ամբողջ ազգային եկեղե-
ցական ժողովներ անգամ կեղծեօք և խաբե-
պատիր գործերով որակելու (Հմտ. էջ 1538
Տարսնի ժողովոյն հանգումները): Սակայն
այս ամէնուն վրայ նոյն իսկ աչք գոցել ալ
ուղեւոր, չենք կրնար զսպել արդարացի
զայրոյթ մը՝ տեսնելով որ ինչպիսի՛ յախուռն
և թիւր լեզու կը գործածէ հայկական եկե-
ղեցւոյ երկու ամենամիայլուն սուրբերը, հա-
մանուն և համապէս շնորհալի և սիրելի Ներ-
սէմներ — Կլայեցին և Լամբրոնացին — պատ-
կերացուցած միջոց. կը զեղեւի կը տատամսի
միոյն գլխուն վրայ արժանապէս բողբոլած
տեսնելու սրբութեան ճաճանչը. իսկ միւսէն
չի պատկառիր զայն բոլորովին յափշտակելու
աննուէր ձեռքով մը»:

Անմիջապէս վերջը Վերապ. քննադատ

Հայրը, ի մէջ կը բերէ երկայն կտոր մըն ալ որուն մէջ Օրմանեան լրբօրէն կը նախատէ Ս. Ներսէս Շնորհալին ու Ներսէս Լամբրոնացին, և մեր եկեղեցական պատմութեան այս երկու գոհարներուն փայլը կ'ուզէ նուազեցնել՝ ճիշտ անոր համար որ երկուքն աէ ուղղափառ եղան և Հռոմայ Ս. Եկեղեցւոյն գլխաւորութիւնը դաւանեցան ու քարոզեցին, զոր ինքն ուրացաւ...

Ասկէ վերջ այսպէս կ'աւարտէ Վեր. Հ. Աւգեր:

«Անշուշտ մեր ազնիւ ընթերցողք ներուղամիտ պիտի գտնուին եթէ մի քիչ երկարեցինք այս գրախօսականին մէջ, ոչ եթ հեղինակին կամ գործին կարեւորութիւն մը տալնու համար, — որմէ բոլորովին զուրկ է իբրեւ բանասիրական եւ անկողմնակալ գործ. այլ վրէժխնդիր ըլլալու համար մեր սուրբ Հայրապետաց նուիրական յիշատակին:

«Այսպիսի անհեթեթ բացատրութիւններ կարգալով կը սկսինք նոյն իսկ տարակուսիլ թէ Օրմանեան Սրբազանդ Ս. Ներսէս Շնորհալոյ գրութիւնները կարգացած ըլլայ, ու բնաւ կամ գէթ երբեք ըմբռնած ըլլայ թէ ինչ է երկուց բնութեանց կոչուած աստուածաբանական խնդիրը, որ այնքան ալ պարզ է եւ նոյն իսկ մի ընութիւն քարոզողներու մէջ չկայ այսօր մէկը որ ուղղապէս երկու ընութիւն չդաւանի ի մարդացեալն Աստուած, խոստովանելով զԻրիստոս կձտարեալ Աստուած եւ կատարեալ մարդ. եւ ինչպէս չպատկառիլ ենթագրելու որ Ս. Ներսէս Շնորհալին անգիտացած ըլլայ իր հաւատքին հիմնական կէտ մը, մինչ այսօրուան ամենէն տգէտ հաւատացեալ Հայն անգամ (ըլլայ էջմիածնական, ըլլայ ուղղափառ) տղայուց գիտէ, կը խոստովանի եւ կը դաւանի սրտով եթէ նոյն իսկ բերնով արտաբերութիւնը տարբեր հնչէ: Միթէ կամաւորապէս փակել չէ՞ աչքերը արեգական լուսոյն գէմ, յոկ բանաստեղծական բացատրութիւններ համարել սա խօսքերը. Բանն աննաւորն ըստ հոսքեան, եղև մարմին ճշմարտութեամբ. գիւրն պահեալ անյեղապէս, գիւն սոեալ ստղապէս:— Այն որ յաւեհ աննաւորնալսն եւ եղեյոցս արարցա-

լսն, խառնի ընդ մեզ անշխորաբար, եւ միանայ անհասարար... երկուս ասեղ զարձեայ բնութիւն, վասն ի յերկուց գոյ միութիւն, չե այն օսար ճշմարտութեան, քե չբաժանեմ յերկուս զմիմ:— Նորն Արամ հնոյն Արամայ որդիացաւ ի Կռսէ Աստուած եւ մարդ ընր խառնեցաւ, երկակին անհասարար յոյժ միացաւ եւ բնութիւն երկախանցիւրն ոչ չիտքեցաւ... սա Աստուած նոյն եւ մարդ որ մեզ ցուցաւ... եր Աստուած նոյն եր մարդ որ իցացեցաւ... զի անհոն բնութեամբ խորով ոչ մահացաւ, այլ խնով մեռաւ մարմնով մահկանացուաւ, և այն և այն: Կարդացած է արդեօք այս տողերը (և գեո այսպիսի հազարաւորները) Ազգապատու մի հեղինակը, թէ համոզուած է գեո ինչպէս իր համոզումն ըլլալ կը տեսնուի որ կարելի է մարդ հաւատայ սրտով ճշմարտութեան և բերնով անոր հակառակը քարոզէ իր բանաստեղծութիւն կամ եւս... մարդահաճութիւն. որովհետեւ խոր գիտոս կարգան (որ ընթեռնուն ի միս առցի): Այսպիսի»:

ԷՍԿԻ ՎԷ ԵՆԻ ՎԱՍԻՅԵԹԼԵՐ

(Տեղամի)

Պու կազէթա, ֆէնա ժուրնալարա գարչը գոյապիլովք մագսատըյա տինտար գաթօլիքէր թարաֆընտան թէէսիս օլունուլ պիր կազէթա իտի: Մ. Լաֆլօրի էվվէլ էմիրտէ պու կազէթանըն էսհամընտան պիր գըսմընը ալմը, սօնրատա օնտ ապօնէ օլմուշտը: Champion կազէթաըն հէր նէ գատար տա լիսանը թըֆըլիյէթտէ եազըմը պիր կազէթա իտի իսէ տէ, Մ. Լաֆլօրիսին պէօլիք բազպէթինի գազանմըշտը: Պու կազէթանըն միւտիրի տայիմա քէնտիսինէ:

— Պէօլիմէք իչուն, զէնկին օլմագ լազըմ տըր, տէր իտի:

Ատէթա պիր շիմէք բարըլտըը կիպի, պիզիմ նամուլը զէնկինին ֆիքըրիտէն պիր թէսավվուր կէչտի:

— Իշթէ պէնիմ արատըղըմ վարիս...

Պիր էլէքթրիք տիյմէսինէ բարմաղընը

պատար վէ խորամէթճիտի հուզւարնա կէլիր :

— Ժան , ըէժի իտարէսինէ կիթ , ալթմըռ
ոանթիմիք բուլլը պիր քեաղըտ ալ տա կէ-
թիր :

Ժան կիթտիքտէն սօնրա Մ . Լաֆլորի
քէնտի քէնտինէ :

— Պուռը նի՛չին էվվէլինտէն տիւշիւնէ-
մէմիշիմ . . . Դարիւ չէյ , ֆուգարաեա մա
էլ մէմուռնիյէ վասիյէթ իտէն չօգ սըր , հալ
պու քի մաթիգուաթըն մէնֆաաթընա վա-
սիյէթ իթմէք առէթ օլմառըռ սըր . . . Մաթ-
պուաթ , հէնուզ պիր խայրէթ , պիր խայր
ամէլ նազարընտա թէլլազզը օլընմառըռ սըր :
Գաթօյիք ճէմաաթընըզըն պու ֆիքրի , պու
թարզը թէլլազզըսը բէք կարիպ տիր» : — Սի-
մաը բարլայօրսը :

— Պիրիթիմ , պէնիմ պու հարաքէթիմ
թուհաթ կէօրիւնէճէք . . . պուռա չօզլարը
սէօյէհէճէք տիր . . .

Էլլէրինի օլալայարազ ,

— Հէմ պու եօլ իլէ եարաղըմ խայր ,
պիլիրմիսին հալընըզ պիր խայր տէյիլ տիր ,
չիւնքի պատէմա էվվէլինտէն ֆազլա նիւսիտէ
չըզարըլաճազ . . . տէօրթ սահիֆէ հէրինէ ալ-
թը սահիֆէլի օլաճազ . . . Պէնիմ վէֆաթըմ-
տան սօնրա տա պէն պու ալէմի խայրա չա-
լըշըռ պուլուռնաճաղըմ . . . տէր վէ կազէթայը
էլինէ ալարազ :

— Զաթէն շիմտիտէն պէն օնը զիյատէ
սէվմէյէ պաշլասըմ , եօլընտա պէյանը մէմ-
նուռնիյէթ իտէր :

Ժան ըէժի իտարէսինտէն ավտէթ իտէր :

Էմհէնիսի վարազայը ըէսմիյէյի էլինէ ա-
լարազ , բէք չօգ միւշքիլաթ չէքմէքսիզին ,
վասիյէթինի թանգիմէ պաշլար :

— Վարիսաքըմ Մաքպուաքըն ինքիւս-
ընա սարֆ իրմեք իչուն , քեաֆիյի սեքվե-
քիմի , հմլաքըմ վէ եօիայը զայը մեհգուլե-
մի «Հիւրիյիքիք Գահրամանը» կազիքսընըն
միւսիքինեք քեք ու վասիյիք իսքիլմ :

Պիր քէրրէ տահա օդուր :

— Իշթէ պու . . . օլառէ եա . . .

Խաթըրընա պիր չիւպէ վարիա օլուր :

— Վասիյէթիմին սուրէթի իսթըմալընը
տա թախտիս իթմէլի իտիմ . . . մէսէլա , վա-

րիտաթըն պիր զըսմընըն , մէճճանէն ապօնէ
գայտընա սարֆ օլուռնապընը թալէպ էյլէմէլի
իտիմ . . . տէյիլ մի . . .

Էյիճէ տիւշիւնմէքսիզին պիր չէյ եարմազ
ատէթի օլմատըղընտան , գալէմ էլինտէ
հիւքսէքտէ թութմուշ օլարազ պէքլէտիլի
սըրատա . մասանըն իւզէրինտէ պիր լամպա
կէօրէրէք ,

— Պուլտու . . . տէյի նիտա իտէր :

Օ լամպա Հիւրիյիքիք Գահրամանը միւ-
տիրի թարաֆընտան , կազէթաընա ապօնէ
օլտուզը իչուն Մ . Լաֆլորիյէ հէտիյէ իտիլ-
միշտի . . . Զօզլարըն գալլինճէ , պու հէտիյէ
ուսուլի , գօնֆէրանսլարտան զիյատէ կազէ-
թայա ֆայիտէլի օլմուշար . . . ֆազաթ պու
սուրէթլէ հէտիյէլէր վէրմէք տէ պահալը օ-
թուրուլօրսը . . . պինտէն ալէյի , թէքրար
եազմայա պաշլար :

— Պէնիմ քեք իքսիլիմ պու վարիսաքըն
օն պին Ֆրանքը , պէնեք սեմեք , վէ օնուն ես-
կի վէ եեմի ապօնիքիքին վէ «Հիւրիյիքիք
Գահրամանը» կազիքսընը օգուեանլարա
հէսիյիքիք քեվզի իքմեք իչուն գուլանըմալը
սըր :

Եազարընըն սարահէթինէ պազարազ ,

— Պու կիւն պէօյիւք պիր զէքիա էսէրի
կէօսթէրիյօրըմ տէյօրսը :

Թարիխինի գօր , իմլա էյլէր , օդուր ,
թէքրաք օդուր . . .

— Պաղը քիմնէլէր վար տըր քի մէշհուր
օլմազ ֆիքրիլէ քէնտի մամէլէքլէրինի էն-
ճիւմէնի տանիլէրէ (Academies) թէք է-
սէրլէր քի . . . միւքեաֆաթլար թէէսիս էյ-
լէսինլէր : Իշթէ պէն տէ կազէթա բիսիքի
թէէսիս իտիյօրըմ !

Միւքէմմէլ պիր իշ եարմըռ օլտուղընա
գանի օլարազ , պիր լաթիֆ թէպպէսիւմ
իլէ զարֆը գարաթըր վէ իւզէրինէ տէ իրի
հրուֆաթլա շու իպարէլէրի եազար :

Իօրի պէնիմ վասիյիքնամեք , 1910 Փետրվար

Զարֆըն իւզէրինի թէմիլի իթմէք իչուն
պիր մում եազարըլը վազըթ , Մ . Լաֆլորի
զալպինտէքի մէմուռնիյէթի հիտա իտիյօրսը :
Թամմ մանտըլա պիր խայր ամէլ եաքմըռ
օլտուղընը անլայօր վէ ֆազլա օլարազ , քէն-

տիտի իշուհն պուհ հարաքէթինտէ պիրտէ սէ-
պէսի իֆթիխար կէօրիւյօրտը :

— Իշ խուսուսընտա տալիմա պիր միւ-
թէշէպպիւս օլտուղըմ կիպի... մաթպուլաթա
վասիյէթ իթմէք խուսուսընտա տա պիրին-
ճիլլիլ իհրաղ իթմիշ պուլուհուեօրըմ... :

Յուսիւղ ւէօքիւն իւղէրինէ միւհրիւնիւ
պասար :

— Պանա իմթիսալ իտէնլէր օլաճադ...
էյի պիրիւրիմ քի չօդ քիսէլէր պէնիմ կիպի
եաքաճադ օլուրլարսա, կայէթ մէմնուն օլա-
ճադլար :

Սօն պիր տէֆա տահա զարֆը թէտզըդ
իտէր :

— Մաէթթէէսսիւֆ, բէք չօդլարը պէ-
նիմ կիպի, պու ճիհէթի խաթըրլարընա պիւլէ
կէթիւրմէլլէր :

* *

Պիր վազարը իֆթիխարլա Մ. Լաֆլօրի
սէրվէթինին ֆրանսիական վէ աթարհական-
նա խայրէթլէրէ սարֆ խիլմէք իւղրէ գուլ-
լանըլաճադ օլտուղընը պիլմէյէրէք եազմը
օլտուղը իւք վասիյէթիսամէսինի ալըր աթէշէ
աթար... բէսմի թամիլայը հավի պուլուհան
օ քեաղըտ կիւղէլլէֆազաթ ազ պիր միւտ-
տէթ տէվամ իտէն պիր ալէվ հուսուլա կէ-
թիւրիւր վէ պու ալէվին գիյասը իսէ, ալիճէ-
նապ սահիպի վասիյէթին սիմասընտան զի-
յատէ, օնուն գալպինի թէնվիր էյլէր :

Պատէհու եէնի թանգիմ իթմիշ օլտուղը
վասիյէթիսամէսինի ալըր. գասասընա կէօ-
թիւրէրէք ճիզտանը մախսուսընտա հըֆը
էյլէր :

— Շիմտիլիք պուրաճըգտա ուլու... պիր
կիւն օլուր ուլանըր վէ հէր քէսի հայրէթտէ
պրազըրսըն :

Գասանըն աղըր գարուզընը գարատըրը
վազըթ քէնտի քէնտինէ,

— Արթըր րահաթը գալպլէ էօլէպիլի-
րիմ... վարիսիմին պիւթիւն տիւնեայա թէ-
սիր խտէճէյինէ էմինիմ, տէր :

ՕՐՄԱՆԵԱՆԻ

“ՀԱՅՈՑ ԵԿԵՂԵՑԻ,, ԳԻՐԲԸ (°)

Գ.

Շատ աւելի մեկին է Ս. Իրենէոսի Լուկ-
տոնի եպիսկոպոսին վկայութիւնը, որ երկրորդ
դարուն վերջերը ապրած և երրորդին սկիզբը
(202ին) վախճանած է : Սա Ս. Պողիկարպոսի
աշակերտած է և Հոռվմ անձամբ այցելած ու
այն տեղի աւանդութեանց և պատահարներուն
լաւ տեղեակ էր : Այդ սա Աւետարանիչներու
հեղինակաց վրայ խօսելով կը գրէ այսպէս .
«Մասքեոս Աւեսարանի գրութիւնը հրա-
սակեց Եբրայեցւոց մեջ անոնց լեզուա-
ներ Պեսրոս եւ Պօղոս Հռովմայ մեջ կ'աւե-
սարանէին եւ եկեղեցին կը հիմնէին : Իսկ
ասոնց մահուրնէ վերջ՝ Մարկոս, առակեթ
եւ քարգման Պեսրոսի, ինչ որ Պեսրոսէն
պատմուած էր՝ գրով մեզ աւանդեց» (Ընդդ.
Հերետ. 311. համ. 4-7) և յետոյ (3.
3. 2) բացայայտ և որոշ վկայութիւն մը ու-
նի նոյն Հռովմայ եկեղեցւոյն Առաքելական
հիմնարկութեան ի Պետրոսէ և ասոր գլխա-
ւորութեան ամենաշքեղ զաւանդութիւն մը .
Ահա ինչ կը գրէ . «Բայց որովհետեւ շատ եր-
կար պիտի ըլլար այսպիսի մասերի մը մեջ
ամեն եկեղեցեաց յաջորդութիւնները թուար-
կել, ուստի ամենէն մեծ ու ամենէն հին եւ
ամենուն ծանօթ Պեսրոս եւ Պօղոս երկու փա-
ռաւորեալ առաքելներէն հիմնուած ու հաս-
տատուած եկեղեցւոյն՝ նոյն Առաքելներէ
ընդունած աւանդութիւնը եւ մարդկան ա-
ւեսարանած հաւատքը մեզ բերելով, որ Ե-
պիսկոպոսաց յաջորդութեամբ մինչեւ մեզ
հասած է, կ'ըմբերանենք ամեն անոն, որ ո
եւ իցէ եղանակաւ, կամ ինքնուրոյնութեամբ
կամ սնափառութեամբ կամ կուրաբար եւ
քիւր կարծեօք կը ժողվեն ուսկից որ պիտի
չէ : Վասն զի հարկ է որ Գլխաւորութեան
նոխութեանը պատճառաւ այս եկեղեցւոյն
միաբանի ամեն եկեղեցի, այսինքն աթարհի
ամեն կողմ գտնուող հաւատացեալները, վասն

զի այս Եկեղեցւոյն ամեն կողմէ եղողներու ձեռով պահուած է միշտ այն աւանդութիւնը, որ առաքեալներէն է»։ Այս ըսելէ վերջ, Ս. Պետրոսի յաջորդները կը համբէ մինչեւ Եւրոպայի ուր ժն. է ու «այս կարգաւ, կը յարէ, եւ յաջորդութեամբ Եկեղեցւոյ մէջ Առաքեալներէն սրուած աւանդութիւնը եւ նշանակութեան փառքութիւնը մինչեւ մեզ հասաւ»։ Նոյն դարուն հռչակաւոր է Գայիոս Հռովմայ Եկեղեցւոյն Երէցի վկայութիւնը։ Ուստի Կատափուկացւոյ աղանդի պաշտպանին Պրոկիլի զէմ՝ Պետրոս եւ Պողոս Առաքելոյ գերեզմանները կը մասնանշէր։ Ահա՛ ինչպէս կը պատմէ զայս Եւսեբիոս ըստ հայ. Թարգմանութեան. Պողոսի հասաւ գլուխն անդէն ի նմին Բաղաբի (ի Հոմ) եւ Պետրոս եւ նախաշեցաւ գլխովայր, ըստ ասելոյ պատմութեանցն, եւ հաստատեալ զնոյն պատմութիւնն անուանաւ այս Պետրոսի եւ Պողոսի. ունի եւ դաւ մինչեւ ցայսօր ժամագնակի գիրքն որ անդէն... ի ժամանակի իբրեւ գուպարած եղեալ մահաւոր ընդ Պաւղոսի՝ այն որ եւ վերակացու աղանդից Փոխապաւնոց, զայս ինչ ասաց նա (Գայիոս Երէց Հռովմայ) վասն տեղեացն, որ եղեալ են ի նոսա մարմինք սուրբ առաքելոցն, առդ եւ ասէ ունիս ցուցանեցաղբութիւնն առաքելոցն, զի երբ կամիս երթալ զու ի Բեսիկոնիս (ըստ յոյնիմ Վասիլիոսի լատ. Vaticanum), կամ ընդ հանապարհն որ հանէ ի կողմանս Ասիայ՝ գտանես դու գլխաղբութիւնն նոցա որ ուղղեցին զայս Եկեղեցի, զի ի միում իսկ ժամանակի վկայեցին նոքա, երկուքին ի միասին (Եւս. Գիրք Բ. Գլ. 25)։ Կը բաւեն այս վկայութիւնները Օրմանեանի սնիրաւ երկրպայնքը ստած ըլլալու համար. կրնայինք աւելցնել տակաւին ուրիշ վկայութիւններ թէ՛ այս առաջին դարերէն եւ թէ՛ յաջորդներէն, յորս նոյն աւանդութիւնը միշտ աւելի շեշտուած է, Ուրոյնէսի, Ս. Կիպրիանոսի, Պետրոսի Ազեքսանդրացւոյն, Կրեմայ Ազեքսանդրացւոյն, Օրատորի, Հեկեղիքոսի, Հերոնիմոսի, Աթանասայ, Օգոստինոսի եւ այլոց սնթիւ վկայութիւնները կեցեր են, որոնց պիտի կարենայինք աւելցնել նաեւ մեր Հայ

Եկեղեցւոյ ո՛չ նուազ հեղինակաւոր եւ բացորոշ ձայնակցութիւնը, որմէ կը տարածայնի եւ կը խորշի բնականաբար Օրմանեանի Հայոց Եկեղեցին։ Կրնայինք այս ամէնուն վրայ խճողել նաեւ հեթանոսներու, ուրացողներու ալ վկայութիւնը, եւ մանաւանդ ցայսօր ի Հռոմ պահուած եւ նոյն իսկ վերջերս անհերքելիօրէն ստուգուած հնախօսական յիշատակարանները, սակայն հարկ է թողուլ այս ամէնը ժամանակ ունենալու համար խօսելու Օրմանեանի շատ մը ուրիշ մտար հախաբառութեանց վրայ, որոնց թիւը գոյնաւորաբար շատ ստուար է։ Հաճոյքով մանաւանդ մէջ պիտի բերէինք Հայ Եկեղեցւոյ վկայութիւնները, որոնք Հռովմայ Աթոռ Ս. Պետրոսի Աթոռ կը դաւանին, Հռովմայ Հայրապետները նոյն Առաքելապետին յաջորդները կը քարոզեն, ի Հռովմ նոյն Առաքելոյն գերեզմանը կը հռչակեն։ Սակայն ասոնք եւ նմանները ուրիշ ստիժա պիտի հարկադրուինք գործածել, ուստի զանց կ'ընենք Բայց չենք ուզեր թողուլ Տէրութեան զգալի Օրատորի վկայութիւնները, որոնք այն ժամանակի հերետիկոսաց զէմ գրուած ըլլալուն՝ Օրմանեանի ալ շատ կը յարմարին եւ կ'առաջնորդեն մեզ վերջին խորհրդածութեան, որով կ'ուզենք փակել այս Գլխոյն քննադատութիւնը, այսինքն Եկեղեցւոյ մը առաքելականութեան պայմաններուն, որոնց վրայէն լուսնայն կ'անցնի։ Լսենք ուրեմն թէ ի՞նչ կ'ըսէ Եկեղեցւոյ ու քրիստոսական հաւատքի հռչակաւոր Ջատագով Տէրութեան զգալի յոս երկրորդ դարէն, յորում ապրեցաւ (160-222/3)։ Նքէ երբեք (գաւառութիւններ մը) յանգցին զիրենք առաքելական դարուն կցել Առաքեալներէ աւանդուած երեւոյթաւ համար... Կրնանք բնել, բո՛ղ մեզսեղ զնեն ուրեմն իրենց Եկեղեցեաց ծագումը. բոլ պարզեն իրենց եպիսկոպոսաց կարգը, որ այնպէս յաջորդութեամբ շարակցուած ըլլայ սկիզբէն. ցուցնեն քի իրենց առաջին եպիսկոպոսը հաստատուած ըլլայ առաքեալներէ կամ առաքելական անձինքներէ. որոնք Առաքելոց միութեան մէջ յարասեւած ըլլան եւ անոնցմէ մին իրենց նախորդը եղած ըլ-

լայ։ Վասն զի առաքելական եկեղեցիները այսօր կերպով եւ որ եպիսկոպոսաց ցանկը մեջսեղ կը դնեն։ այսպէս Զմիւռնիացւոց եկեղեցին ունի զՊողիկարպոս Յովնաննէսէ դրուած։ Հռովմեացւոցը կը ներկայացնէ զԿղեմէս Պետրոսէ դրուած։ Եւ այսպէս ուրիշներ ալ իրաւամբ մեջ կը բերեն առաքելներէ հաստատուած եպիսկոպոսներ, որոնք առաքելական սերմին փոխադրողներն են։ Թող հերեթիկոսներն ալ այդ տեսակ բան մը յերկրեն, (ճշմարտութեան դէմ) հայհոյելէն վերջ իրենց ի՞նչ բան չի բուլատուիր։ Բայց յերկրելու ալ ըլլան չպիտի կարենան դիտումնին առաջ տանիլ։ Վասն զի նոյն ինքն իրենց վարդապետութիւնը Առաքելականին հետ բաղդատելով ունեցած տարբերութենէն եւ հակասութենէն բարձրագոյ պիտի շեշտէք եւ ո՛չ Առաքելոյ մը, ո՛չ ալ առաքելական անձի մըն է։ Վասն զի Առաքելները իրարմ տարբեր բան չպիտի սորվեցնէին եւ ո՛չ առաքելական անձինք անոնց հակառակ վարդապետութիւն մը պիտի հրատարակէին՝ մնալով այդ անոնց գործ՝ որոնք Առաքելներէ սորված ըլլալով մեկեղ տարբեր եղանակաւ բարոգեցին։ Այս եղանակաւ ուրեմն պիտի հանչցուին այն եկեղեցիները, որոնք քաղես իրենցմէ տաս վերջը եկած ըլլալուն համար՝ Առաքելներէն կամ առաքելական անձինքներէն մեկը իրենց հիմնադիր չեն ցուցներ, սակայն միեւնոյն հաւատքի մեջ միահաւան գտնուելով ո՛չ նուազ առաքելական կը յորջորջին իրենց վարդապետութեան ազգակցութեամբը։ Բայց (առաքելական վարդապետութեան չհետեւող եկեղեցիք) ո՛չ են (առաքելական), ո՛չ ալ կրնան ցուցնել քեզ ըլլան ինչ որ չեն, եւ ո՛չ կ'ընդունուին ի խաղաղութիւն եւ ի հաղորդակցութիւն ուրիշ ո եւ է կերպով առաքելական եղող եկեղեցիներէ, վասն զի խորհրդոյ տարբերութեան պատճառաւ ոչ մեկ կերպով առաքելական են։ Հոս կենանք վայրկեան մը։ Կ'արժէ քանի մը նախադասութիւնները երեւան հանել եւ շեշտել։ 1. Հստ Տէրութեան հետ առաքելականութեան համար չի բաւեր նիւթականօրէն հիմնուած ըլլալ Առաքելներէ

կամ անոնց յաջորդած ըլլալ։ հաստ 2. հարկ է Առաքելոց վարդապետութեան մէջ յարատեւած եւ անոնց հաւատքը անաղարտ կերպով պահած ըլլալ։ այնպէս որ 3. հաւատքի նոյնութիւնը կամ ազգակցութիւնը Առաքելական վարդապետութեան հետ՝ իրաւունք կու տայ ամէն եկեղեցւոյ առաքելական ըսուելու, եւ ըստ այսմ 4. կրնան շատ վերջ հիմնուած ըլլալ եկեղեցիներ, սակայն Առաքելոց վարդապետութիւնը, հաւատքը ժառանգելով առաքելական կ'ըլլան եւ կ'ըսուին։ մինչդեռ ընդհակառակն 5. Առաքելէ մը իսկ հիմնուած եկեղեցի մը՝ Առաքելոց հաւատքէն չեղելով առաքելական կոչուելու իրաւունքն ալ կը կորսնցնէ։ Ուստի իրաւ չէ թէ միայն առաքելական ծագումը... ամեն երեսունեայ եկեղեցիներէ կը պահանջուի, որպէս զի Քրիստոսի՝ Եկեղեցւոյ երկնաւոր հիմնադրին հետ միացեալ եւ կապակցեալ ըլլալնին հաստատուի։ Ժազու մը չի բաւեր, հարկ է առաքելական շարունակութիւնը հաւատքի միութեամբ, ստանց որոյ առաքելականութիւնը խզուած եւ առաքելական ծագումը ուրացուած կ'ըլլայ։

(Շարունակելի)

ԼՈՒԻ ՎԵՕՅԵՕ

ՊԱՐԱՊՈՒՐԴԻ ՄԵՋ

(Շար.)

Բայց այս քրքիջը արգելք չէր ըլլար բնաւ Լուի Վեօնոյին աղօթքի միմունջին։ Արձակուրդը բանթող է, գործադու չէ։ Գործադու կ'ըլլար եթէ դիպակցէր հոգւոյ չեմ գիտեր ի՞նչ ծուլութեան և Աստուծոյ առջև խոժոռադէմ կացութեան մը հետ։ Մեր օրերը հնարուած է բազկածալ գործադուլը, կու գամ առաջարկելու ձեզի, Լուի Վեօնոյի առաջնով, ձեռնամաճ արձակուրդը։

Եթէ գիտնայիք ասոր ո՛րչափ գուարճալի ըլլալը։ Բանը դձեղ թող չգայթակղեցնէ որովհետեւ զայն կը բացատրեմ։ Եթէ տեղեանք ըլլայիք այն խորունկ, գողար, քաղցրաժըպիտ ուրախութեանը, զոր կը ճաշակէր Լուի

Վէօյեօ մասնակցելով գեղջկական արարողութեանց և ծէսերուն, ժամերգութեանց և սօնախմբութեանց, որոնց բարեպաշտիկ և սրտայայտ երեւոյթ մը կուտար գիւղի շրջանա՝ կը: Արձակուրդի ատեն միշտ ներկայ կ'ըլլար գտնուած տեղւոյն եկեղեցւոյն երեկոյեան ժամերգութեան, և «աւելի ախորժ կը զգար սաղմոս երգող կամ երգատող ժողովրդապետի մը ճաթած ձայնէն, քան ամէն թեթեւ խօսակցութիւններէ և խորիմաստ տրամաբանութիւններէ»: Լուի Վէօյեօ՝ երեկոյեան ժամերգութեան ատեն. ի՞նչ գեղեցիկ նկարագիր: Կ'ենթադրեմ զինքը տեսնել. իր խոշոր աղօթագիրքը ձեռքը, խոշոր ականոցը քթին վրայ՝ կը սաղմոսէ: Կարծես գիւղին դասապետն է որ զրակալի զինքն իջած՝ հաճեր է համեստօրէն խառնուիլ հաւատացիւց բազմութեան հետ: Բայց ասկէ լաւագոյնը կայ, որ է Լուի Վէօյեօ թափորի մէջ. և ինք միայն կրնայ զայս նկարագրել: Տեսարանը Բլումպէտի մէջ է. Ս. Հաղորդութեան տօնին օրը «թափորին կը մասնակցէին շատ մարդիկ, բոլոր ջրհանկիրները զինեալ էին, բոլոր տղաները փոքր դրօշակներ բռնած էին, բոլոր երեքէն մինչև հինգ տարուան աղջիկները սպիտակ պատմուճառներ, կապոյտ ժապաւէններ կը կրէին... Երկու հոգի յատկապէս յուզեցին զիս. ջրհանկիրներու ութնամեայ մէկ տասնապետը և վեցամեայ թմբկահար տղայ մը: Երեսնապետը գողգոջ ձեռքով սուրը բռնած էր և դողդոջ ոտքով քայլաչափ կու տար: Թմբկահարը կը զարնէր փոքրիկ կատղածի մը պէս՝ միշտ ձայնակցելով: Այս պարզ եղելութիւնները, որ տեղի կ'ունենային Աստուծոյ շուրջը, արցունքա կը յուզէին»: Այս ամէն բաները կը վայելէ իբրև քրիստոնեայ և իբրև գեղարուեստասէր: Անշուշտ կը հիանաք, պարոններ, այն էջերուն վրայ, ուր Շաթոպրիան և Լամարգին բանաստեղծօրէն կը նկարագրեն քրիստոնէական տօները, Լուի Վէօյեօ ալ ունի նոյնպիսի էջեր: 1886ին, Մընընդեան աւտոն կը գրէր հետեւեալ նամակը. «Ներկայ եղայ ամբողջ ժամերգութեան և չեմ գիտեր ինչո՞ւ համար բոլոր կեանքս չեմ նուիրեր Սաղմոս երգելու, որովհետև և ոչ

մէկ տեսակէտով ասկէ գեղեցիկ բան մը կըրնամ գտնել... Հոն խելամուտ կ'ըլլայ մարդ լաւ քաղաքավարութեան, ընտիր գրականութեան, ազնիւ սիրոյ, նկարելի օդ մը կար: Լուսին մը՝ շոգիով սքողուած, ոչ թէ ծածկուելու համար, այլ թողլու համար որ երեւան աստղերը, որոնք կը ցոլային գոհունակ աչքերու պէս. բոլոր ծառերը՝ բիւրեղի փոշիով պատուած. երկիրը՝ չոր և քայլերու տակ զուարթօրէն դարգափուն. բայց ցուրտ՝ այնչափ միայն, որչափ պէտք էր այս հրաշալիքները յառաջ բերելու համար: Այսպէս ըլլալու էր Փառքի բարձունքի գիշերը»: Ահ, իրեն որչափ երջանկութիւն էր այս հանգստեան ժամերուն մէջ հաւատքի կեանքը ապրիլ և զայն ցոյց տալ: Պարոններ, թերեւս դուք ձեր փոքրութեան պատճառաւ չէք պիտի այս բաները, բայց օր մը չէ օր մը պիտի գիտնաք: Վէօյեօ հակառակորդ եղաւ ազատական կաթողիկէութեան: Գիտէք ի՞նչ է ազատական կաթողիկէն: Մարդ մըն է որ կը վախնայ, Զուգեր գրգռել, կը սիրէ կրակարանին անվրդով անկիւնը և փոքր մատուռներու դռնիակ անկնդրութիւնը: Աշխարհի այլափառ վարդապետութիւնները քրիստոնէական հաւատքին հետ կը հաշտեցնէ: Աւետարանին ճակտին վրայ կը դնէ զգուշաւորութեան շիկնումը, որ իր ամօթղած այտերը կ'երանգէ: Լուի Վէօյեօ պիտի ձաղկէ վարդապետութեան մէջի մարդկային նկատումը՝ ինք նախ իր կեանքէն վտարեց բարեպաշտութեան մէջի մարդկային նկատումը: Խաչին նշանը անգամ մը որ վերահաստատուեցաւ իր ճակտին վրայ, ճառագայթեց, փայլատակեց, ինչպէս կը ճառագայթէ կը փայլատակէ եկեղեցիներու բարձունքը:

Պարոններ, դուք ինքնին հետեւութիւն պիտի հանէք: Աստուծոյ հանդէպ ունեցած պարտքերնու մասին պարտաւորդ չկայ, եւ ո՛ւր որ երթաք ձեր քաղքին կամ գիւղին մէջ, պիտի ըլլաք, Վէօյեոյի բառերով ճակատարաց կարողիկէ:

(Շարունակելի)

ԵՐԹՆԵԱԿ ՔՐԻՍՏՈՍՆԵՒ

ՏՕՆԱՅՈՅՑ

Սեպտեմբեր 14	†	Կ/ր. դ/վ. Խաչվերաց
15	†	Բշ. ած. Տօն Խաչի: Մեռելոց
16		Դշ. ախ. Տօն Եկեղեցւոյ
17		Դշ. ըմ. » »
18		Եշ. ըմ. » »
19		Ուրբ. գմ. » Խաչի:
20		Շր. զկ. » »

ՍՈՒՐԲ ԱՆՓՈՆՍՈՍ ԼԻԴՈՒՈՐԻ

Տօնք՝ Զ Յօղոսոս

(Շար.)

